

տեղծում ազատութեան եւ վերանորոգութեան կարօտող հայերի մէջ: Երեւանի Եզ-վիտներն էլ, ի հարկէ, ամենայն եռանդով հրահրում էին այդ տրամադրութիւնը, մըղելով Յակոբ կաթողիկոսին դէպի կաթուղի-կութիւն: Սրանով է բացատրուում այն փաստը, որ Յակոբը փոխեց իր վերաբերմունքը՝ դէպի Եզվիտները» (10):

Պէտք չէ անտեսել նաեւ այն իրողութիւնը՝ թէ վերոյիշեալ Ֆրանսացի գործակալներու ժամանումէն յետոյ, Յակոբ կաթողիկոս 1666ին, Ս. Սարգսի պահչի ժամանակ, Սրբղ. Քահանայապետին մօտ կը դրկէ իր եզբօրորդին, Մանուէլը, Ս. Հռիփ-սիմեանց եւ Գայիանեանց նշխարներով (11):

Յակոբ Զուղայեցի, ինչպէս յաճախակի Հոռոմ զրկուած նամակներով յայտնած էր, կրնար այլեւս նաեւ հրապարակաւ ցոյց տալ իր կաթողիկէ դաւանանքը: Զայս կը կատարէ 2 Ապրիլ 1676ին, Աւագ Հինգշաբթի, էջմիածնի կաթողիկոսական եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան բազմամբոխ հաւատացեալներու:

Առ այս, Հայրապետը Ս. Աթոռէն խրնդրած էր Առաքելական պատուիրակ մը: Քահանայապետը էջմիածին զրկած էր Դոմի-

(10) Լեռ, Անդ 344-345:

(11) Դիւան Ս. Յակոբայ, Սիոն, Նար Շրջան, ժ.Դ. Տարի, 1940, Թիւ 7-8, էջ 202: